Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Ապրիլ 4-ին. Թիֆլիս №14.

## «ԳՈՐԾ»-«ՄՇԱԿԵԱՆ» ԲԱՆԱԿՌԻՒ



*«Մշակի» խմբագրութիւնը.*—Մենք մեր կամքով եկել ենք պատասխան տալու հասարակութեան առաջ հաւաքուած գումարների համար, իսկ դուք, «Գործի» և «Նախորդների» ղեկավարներ, դուք ու՞ր էք փախչում։ (Տես «Մշակ»)

*«Գործի» ղեկավարներ.*—Գողեր, աւազակներ, դուք կեղտոտ ծնունդներ և այլ։ (Տես «Գործ»)

## ԱԽԱԼՑԽԱՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ



Դպրոցների հոգաբարձութիւնը ստիպուած է մանկավարժական ժողովին դագանակներով կարգը պահպանել։



—Է՜յ ոստիկան, լսում ես, վերցրու այս մարդուն և տար ոստիկանատուն, նա կարծես թէ կասկածելի է։

—Ես նրանում ոչինչ կասկածելի չեմ գտնում։

—Լսի՛ր, յիմար, չես էլ կարող գտնել, որովհետև գաղտնի խորհրդական չես. իսկ ես գտնում եմ և երբ գտնում եմ՝ հրամայում եմ, և երբ հրամայում եմ պէտք է հրամանս կատարես, որովհետև դա իմ կամքն է։

—Լսում եմ, ձերդ……ցութիւն։



ԹԻՖԼԻԶԻ ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԸ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

„ԽԱԹԱԲԱԼԱ“

Ծրգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր.
կէս տարւանը » » » » 2 ր. 50 | կէս տարւանը » » 3 ր.

Խմբագրութինը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Մօսկովսկայա փ. № 19

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“։

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Re'daction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ՆՐԻՑԵԱՆ

## ՈՒՑՆԱՒՈՒՐ *) ՄԱՐԴ

(Հէքիաթ)

Աստու ստեղծած սիրուն աշխարքներէն մէ տեղի անումը՝ Հնդուստան էր, էտ Հնդուստանումը կէր չկէր, մէ քաղաք կէր, անումը Տաքստաք էր. էս Տաքստաք քաղկումն էլ ջուստ ջուստ խալխ էին ապրում։

Ջունքի Աֆրիկումը կաֆիր կէր, էտու համա էլ Հնդուստանում վօյէնի պօլօժենիա էր. ու չունքի Տաքստաք քաղաքն էլ Հընդուստանու աշխարքումն էր, էտու համա էլ Տաքստաքումն էլ մէ սակութար վօյէնի գուբէրնատուր կէր, սաւայ մէկէլ մինձամինձներումէն ու ղարաղօլներումէն։

Ջիմ գիդի ինչումէն էր, համա խալխը փիս խասիաթ էր ըննի, հուզուրումը կի էննենց լաւ խալխ էր, էննենց լաւ, վօր վունց վօր մեղը ու կարաքը, տուտնհան չայի ժուգը։

Մէ զալուա էլ ունէին էտ Տաքստաք քաղկցիք, վօր սաւայ թամաղութենից մէ գրօշի շնուրք չունէր, խօսելու ժուգն էլ էննենց էր խօսում, կօսիս լօրի ըլէր ուտելիս։

Ուշբուսի չլէնիլը էնթաուրնիր կի չէին, վունց վօր մեր Ծատախանն ու Արղութովը, էննենցնիրն էին, վօր օր ու գիշեր գօվէիր, էլի քիչ էր, համա բանը ընչումն էր, բանը էնդումն էր, վօր սրանք էլ էննենց էին գովւում, կօսիս փիշխուլ ըլէին։

Տաքստաք քախկում, չունքի ամէն թաւուր խալխ ապրում էր, էտու համա էլ ամէն թաուր լիզւով էին խօսում։

Էս Տաքստաքումը քրիստօնեայ մարթիք էլ էին ապրում։

Էն մարթը, վօրի համա խօ պիտիմ խօսի, ինքը մէ քրիստօնեայ խասիաթի տէր մարթ էր, մագրամ, ուրիշ ուրիշ հաւատաւորին էլ չէր գրնում։

Էտ մարթի անումը Լիպօ Տուտի էր։

Լիպօտուտին մէ անումով մարթ էր, նրա մամէն էլ անումով մարթ է էլի, մէրն էլ, պապն էլ ու գեղիցեն էլ։

Ու չունքի խատակ հօրն ու մօր վուրթի էր, էնթաուր ծնունդ չէր, վունց վօր ըլում ին, վօր անումով մամա ին ունենում ու հուզուրումը կի տասը թայիր, թայիր մարթկերանց վուրթիք ին, ան թէ չէ, էննենց էլ չէր, վունց վօր հիմի բաղէլնիցերում (ծննդարաններում) ծնածնիրը, վօր էրեխերքին էննենց ին փոխում, վօր ծընգդանին ասում ին տղայ ծնեցիր ու իժում աղջիկ ին տալի տուն տանելու, ան աղջիկ ին փաթըթում բարուբումը, էտու համա էլ, մեր Լիպօ տուտին էն թաուր խասիաթ ունէր, վունց վօր իրա մամա պապերը՝ Աստծուն ստող, մարթումէն քաշուող, զակօններն պատուող, մինձերն աիղ տուող, պատկի հիդ պատիկ, տօլերի հիդ տօլ, էն թաւուր քրիստօնեայ, վօր օխտը էպիսկոպոսս, մէտի էննենց չէին կանայ ըլի, էն թաուր ղեմօղրատ, վօր Վարքին կու մօտանայիր (համա ցօցիալ չէր, վունց վօր քախկումը կան), էնթաուր ղարղիմանդ, վունց վօր Նամեանիկ, էննենց յօթի վունց վօր խատակ քախկի տղայ, էն թաուր մարթասէր, վօր Քրիստոսն էլ կու արմընար ու էս մարթը ապրում էր, ու զուրձում էր ու ապրում էր, թէ մէկ իրա համա, հարիրն էլ ուրիշներու համա։

Վօյէնի պօլօժենիին խօ գիդիք մարթիք մէ քիչ ափրակնիր ին ըլում, էտ ժուգը վունչիչ չիս կանում անի։ Տաքստաք քախկումն էլ վօյէնի պօլօժէնի ժուգը, մէկը թէ վօր փաշտա ու սաիս, վունց վօր միգմօղ ադաթ է, խէր ան աոօխչութին, էն չախնէէթ կու չաթէին, չունքի Հնդուստանի զակօններով, օչով վօյէնի պօլօժէնի ժուգը պրասւս չունէին փաշտալու։

Ջունքի մինձ քաղաք էր ու էտ հանցի էլ զակօննիր կէր, էտու համա էլ էտ քախկումը ինչքան մարթ կէր, էնդադամ էլ պարտիէք կէին։

Մարթ կէր, վօր ասում էր. ես անարխիստ իմ, կօսէ ու թէ հարցնում էիր, թէ ինչ է անարխիստութին, ջուղաբ էր տալի, ես, ես իմ, կօսէ, դուն դուն ես, կօսէ, ես օչովին չիմ ճանչնում, վունց հէր, վունց մէր, վունց ախպէր, վունց քիր. ես ինձ համա ու դուք էլ ինձ համա կօսէ։

Մարթ էլ կէր, վօր ասում էր ես մանարխիստ իմ կօսէ ու թէ հարցնում իս, ինչ բան է մանարխիստութինը, էնչախնէէթ ըէզինէ չօլտի էին չանց տալի։

Կային մարթիք, վօր ասում էին, մինք, կօսէ, ցօցիալ ինք. (էս ցօցիալութինումն էլ, թայիր թայիր ու չեշիդ չեշիդ մարթիք կէին) ու թէ սրանց էլ հարցնում էիր, թէ ցօցիալութինը ինչ հանցի բան է. ջուղաբ էին տալի. ցօցիալութինը էն թաուր բան է, կօսէ, վօր ջէր մինք էլ չինք գիդի կօսէ, համա չունքի իմացել ինք, վօր փուղն էլ լաւ բան է, կօսէ, էտու համա էլ մեր պրօգրամումը, ջէր էնինք գրում, թէ փուղը աշխարքիս ամենալաւ բանն է ու ամեն էլ ուզինք ու չատան, վայ նրանց միխկը։

Սրանք մէ լաւ խասիաթ էլ ունէին, ախկաներու, ժամերու ու չկօլէքի համա փուղ էին մօղ անում, իժում իրենք մաքրագրթում։

Կէին ցօցիալ դեմօքրատնիր էլ, սրանք էլ ասում էին, էնդդամ պիտինք աշխատի վօր չրեղքինք, կօսէ։

Կէին պատրիօտնիր էլ, սրանք Ջիխադան զօրքերիցն էին, մեր Արշակ Եղիզարովը, «Մակի» անմիտկ ըէղախտուրը, թամամ սրանց թային էր։ Համա ափսուս վօր, էտ պատրիօտնիրը Տաքստաք քախկումն էին ու Արշակը կի Նախիչէնում, ան թէ չէ մեր պիտալած քախկումը։

Պատրիօտ կղիօտնիրի բայրաղը էն էր, վօր ինչ կար չկար, պտէր մուստարի ու... արնոտուի։

Արնի համա ու էն էլ քինթ ու պռունգի արնի համա, սրանք հոքին կու տային։

Կէյին կղերականներու պարտիէք, սրանց էլ թէ հարցնում էիր, ինչ իք ուզում. խիստ անատտուճ բանիր էին ասում։

Ուրիշ ուրիշ ու թայիր թայիր պարտէք էլ կային։

Համա սրանց մէջ մէ Աստու սիրած պարտիա չկէր, չկէր ղեթաղուայ ու խալխն էլ էն էր ասում, ինչի չկայ կօսէ, էնթաուր, վօր մեր սրտից ըլի կօսէ.

Խալխը, ինչ է խալխը,

Խալխը մէտի վիկալած օխչարի սուրու է ան թէ չէ գիդի նախիր։

Մաչ։

(Նչի կուլի)

Դուապար Կալյառու զեանց



*) Օտարոտի

## „ԽԱԹԱԲԱԼԱՅԻՆ“

*(Զատկական նւէր)*

Զատիկ է… և ես «Խաթաբալա»-ջան,
Коньякъ եմ բերում քեզ հարիւր փրնջան։
Խմիր ու մաղթիր մեր ԳԱՄԳԱՐ-ամուն,
Որ նա ցեցերի բուրթը տայ քամուն.—
Որ լուսանկարեակ այդ Բիօ-Գրաֆը
Իր նաւը յաջող դուրս բերէ ափը։

Խմիր ու մաղթիր, որ ՄԱՐԳԱՐ-դայիս
Ժանգոտածներին մաքրէ մինչ մայիս,
Որ մեր խշարած ՓԱԼԱՆԴՈՒԶ-լալան
Երբէք չը բռնէ էշին անփալան։

Խմիր ու մաղթի, որ ԳԷՕԶԱԼ-ԲԱՋԻՆ
Գեղեցիկ սեռի քիչ դըպչի պոչին.
Որ սիրածարաւ, զարգոտ ՄԵՍԱՆ-ԵԱԽՇԻՆ
Փեշը պինդ կապէ իր եարի փեշին։

Խմիր ու մաղթիր, որ Ղազարոսը
ԳԷԹ մի օր թողէ ուրիշի քոսը.
Որ մեր հանաքչի յարգոյ ՕՇԽԱԲԸ
Վատ մարդի գլխին թափէ շան լափը։

Խմիր ու մաղթիր, որ ՍՏՈՐԱԿԷՏԸ
Գայթար չըմղէ լիրբ մարդի հետը.
Որ գիւղատնտես ԵՍ-ՁԵՄ հանտորը
Միշտ բարձր պահէ խոփն ու արօրը։

Խմիր ու մաղթիր, որ Сатирик-ը
Աչքից չը թողնէ օրւայ չարիքը.
Որ փառածարաւ ՆԵՄՕ-ԷՖԵՆԴԻՆ
Նախարար ըլլայ, գալոց կաղանդին։

Խմիր ու մաղթիր, որ ԱՊՏԱԿՈՒՆԻՆ
Միշտ ապտակ ածէ մարդագգեստ շունին.
Որ փայլակահար պարոն ԿԱՅԾԱԿԸ
Մի օր ցոյց տայ իր շանթն ու կրակը։

Խմիր ու մաղթիր, որ ԻՋՄԻՐԼԵԱՆԸ
Գայ, հոգսը քաշէ իր ուէր տանը.
Որ վեհաթափուր մեր ՄԱՅՐ-ԱԹՈՌԸ
Բարեխօս ընդունէ Գրիգորի թոռը…

Խմիր ու մաղթիր, որ ՍՈՒՐԷՆԵԱՆԸ
Ճանաչէ իրա չափն ու սահմանը.
Որ թայֆայամոլ այդ տեղապահը
Չը վարկաբեկէ տաճարն ու գահը։

Խմիր ու մաղթիր, որ ՃԵՄԱՐԱՆԸ
Չընկնի գայլերի անարգ բերանը.
Որ Էջմիածնի սև-ագռաւները
Զափի տակ դնեն իրենց կըրքերը…

Խմիր ու մաղթիր, որ երրորդ Դուման
Мужикъ-ի ցաւին անէ մի դարման
Որ հոկտեմբերեան манифестъ-ն արդար
Չը մնայ թղթի վրայ մեռած տառ։

Խմիր ու մաղթիր, որ Тимошкинъ-ը
Прушкевичъ-ի հետ մանի духанъ-ը.
Որ մարդապատկեր գայլ Меньшиковъ-ը
Суворинъ-ին գրկած ընկնի սև ծովը։

Խմիր ու մաղթիր, որ վեհ Սուլթանը
Զօլումը ճնայ և ոչ իր տանը.
Որ գառը դառած այդ հին գազանը,
Խորտակւած տեսնի իր գաւազանը…

Խմիր ու մաղթիր, որ «Խաթաբալան»
Գայլերի դիմաց միշտ ճնայ ասլան.
Որ ազատախօս խեղճ ԼԻԼԻՊՈՒՏԸ
Մի օր հասկանայ և իր օգուտը…

*Լիլիպուտ*

---

## ԲԻՒՖՈՒՐԻ ԶԱՒՈԴ

Սարախտան կանուխ, հետի լողաց, սանձլամիշ էի էդիր։ Ցաշկերախ դրկեցի չարսու, բիչմ մալինայ առնելու Շնորհակալ իմ, աղքան դավերիայ ունիմ, աանց փողի թղթի մէջ լցրիր. դրկիր էին։ Մալինան դարտկեցի, վարավուրդ էրի, որ աղած թուղթ է, հայերէն գազէթ է. անունն ալ «Գործ» №45։ Բաշլայեցի կարդալ, հմը ինչ կարդամ, բիթուն գիտնականի բիւֆուր, խամ, խամ բիւֆուր, եղմա բիւֆուր։ Գիւմրեցի չափխուններն ալ փաս, աշտարակցիք ալ փաս։ Գիտիմ, չէք աւտնար։ Դէ յականջ էրէք, աս բիւֆուրները շարեմ էստեղ. դուք ալ կարդացէք, յուսում աւէք, ապաղի հօրը օղորմի աւէք։

«Զզւելի, լկտութիւն, սատանութիւն, չարանենգ, գաղիր, խայտառակ, կեղտոտ, որդեր, աղբի ծնունդ։ տխեղծներ»…։ Մնացածներն ալ ձեզի փեշքեշ, աղքանն ալ նմուշի խաթեր, հերիք է։ Մէ կտորմ տեղ որ աղքան բիւֆուր էին շարեր, հմը սաղ գազէթին մէջ վճրքան գլէր կը։ Դէ ըսէք, տեսնեմ, վճր աստւածը դարուվ կենէ կը, որ համ օխթը մանէթ առամ, համ բիւֆուր կարդամ, էրէխէքս ալ սորվին, դրկցի աղօցը «լկտի ու աղբի ծնունդ» քախն։ Աստր անունն ալ գազէթ է, հա, թէ բիւֆուրի զաւօդ։ Գործ—աա Գործ, բիւֆուրի գործ, կինտօյի գործ։ Կերևնայ որ աս գազէթին աղաները դիշեր ու զօր բիւֆուր գործին կը։ Չէ, աղբար, համ փարայ տամ, համ բիւֆուր կարդամ, աղիկ մեզի ձեռ չի տայ։ Ինչպէս Խաթաբալան գրիր է, № 12 մէջ, մանրավաճառ Գէորգին լաւ եարամիշ գլխ կը։ Թող փըթերով առնին, տպրակ շինին, ային օյին գահր ու գխկուճներ լցնին, ծախին։ Աղիկ կարդալու բան չէ։

Դալալչի Մառգար

---

## ՆԱՄԱԿ ՄԱՅԿՈՊԻՑ

Խաթաբալա աղա ջան.

Մեր պատւական քաղաքացիք էսէէն մէկէն թար ժամ էն մոզոնած քի, գիփ խայ ազգը լուսաւորելի, ու չունքի ժամբարուն ի, զար խմա էլ սիրուն տէրտէր ին պախելի, ամա էս էսպէս էլ խալխը ժամ չէն էթալի. մեր պարոն էրեցփո Յ. Թերզեանը քիչ ի ճայլի քի լաց ընէի, ապրուստ չկայ, ասելի։

Էս բանէն շատ զարմանքս գեասէր, եար բաբի, էս բանի պաճառն իմանամ. մէկին հարցրամ, մէկէլին հարցրամ, ամէնքն էլ ասեաէն, հալբաթ քի առուտուր չի ըլնի, քանի որ մեր տէրտէրը… էլ ինչ բանէք, դուք չէք նայլի… զար խմար էլ ժամ չէնք գնալի։

Մէկա չէնք նայլի ինչթար ընենք քի, ժամը առուտուրընի ու մեր երեցփոխ Թերզեանը լաց չլնի։

*Բարեգեամ*

---

## ՄԱՐԳԱՐԷ

Երբ Ապօլոնի հրամանից դրդւած,
Գօլիճեա մուսան տեղ գտաւ ազատ
Իմ հոգու խորքում. այն օրից սկսած
Դատարկւեց չորս կողմս, ճնացի մենակ
Եւ այնուհետև մտայ անապատ։
Բայց չանցաւ երկար։ Ինչպէս չէջ կրակ
Սկսեց վառուել իմ մուսան նորէկ,
Գայծառ աստղերի և լուսնի լուսով։
Փոթորկւեց իմ սիրտ, բորբոքւեց իմ սէգ
Ու տխուր լեզուն Եւ լի արցունքով
Սկսեց դուրս գալ իմ հոգու խորքից
Անեղ հառաչանք խղճահարութեան։
Եւ ես սիրեցի տեսնել հեռուից
Գունատւած ցաւը տանջւող մարդկութեան.
Եւ կարեկցութեամբ իմ հոգին լցւած
Ընարս ձեռքիս մտեցայ անվախ՝
Որ սփոփեմ նրա վիշտ, ցաւ ու հոգսերը։
Բայց ահա նրանք ի մի միացած,
Սկսեցին նետել դէպի ինձ քարեր։

*Փայլակ Արշակունի*

---

## ԴԷՐԲԷՆԴԻ ՑԱՒԵՐԻՑ

I

Աղա Կալատուզեան

Էսպէս էլ խաթաբալա կլինի. 2000 ռուբլուց աւելի փող ունենաս և մինչև օրս չը իմանաս, թէ ինչ է եղել, ինչպիսի գրպան է մտել. լայնազոյն, լայն, թէ նեղ, ախր էս Աստւած կը վերցնի. 2000 ռուբլին քիչ բան չի, և որ գլխաւորն է, իմը չի, թէ չէ կասէի, լափէք, պնչներովդ թափի. ախր դա դըպրոցի փողեր են, դպրոցինը։ Դէ հիմայ ես մի թեթև պատմեմ էդ փողի պատմութիւնը, նրանից յետոյ՝ էս խաթաբալան կը յանձնեմ «Խաթաբալային» և ամեն մարդ իր պատկերը էնտեղ կը տեսնի —

Կարծեմ 1896 թւականին էր, երբ դըպրոցները փակեցին. այդ ժամանակ մեր դպրոցի ոչ-բարով հոգաբարձուներն էին Տէր Աբրահամ քահանայ Սպանդունին, (որը իր ազգանունը բացատրում է սպանդանոց բառից և խեղճերին սարսափեցնում,) Կա-

տանդին Վասիլևիչ Ղազարեանը, վերջինս և նախագահ հոգաբարձութեան և չեմ յիշում էլ ովքեր, և դրանց օրով դպրոցը, որ այժմ ցնցոտիների մէջ է, ունենում է 2000 ր, plus մի բան. (էս մի բանը շատ ճարպիկութեամբ է սրբած). երբ լուր է պտտում թէ դպրոցների փակումով վերցնելու են և փողերը, էս մեր ազգ—հոգաբարձուների ջերմը բարձրանում է R. 100°-ից անց և այս 2000 րուբլին էլ, այդ սատանի տաքութեան մէջ գոլորշիանում է վայրկենօրէն, այնպէս որ ամբողջ 11—12 տարի այդ մասին ոչ մի խօսք չի լսւում։

Անցեալ տարի, կարծեմ հոկտեմբերին, մեզ իր բարձր շնորհին արժանացրեց թեմակալ առաջնորդ գերապատիւ Անանիա արքեպիսկոպոսը, ամենազորմած այցելութեամբ. երբ նրան ներկայանում են տեղիս ազատականները, այդտեղ տեղի է ունենում մի թեթև փոթորիկ. մի պատկառելի և բոլորի վստահութիւնը վայելող ծերունի հարցնում է.

—Սրբազան, բա ի՞նչ եղաւ մեր դպրոցի 2000 րուբլին, մեր ձեռքով համարել և տւել ենք հոգաբարձուներին, իսկ մինչև հիմայ ձայն չկայ։

Ողորմած առաջնորդը կանչում է իսկոյն երբեմնի նախագահ Կոստանդին Վասիլևիչին և բացատրութիւն ուզում. սա, աջ ձեռքի ցուցամատին մի թուղթ մատի փաթաթած՝ ներկայանում է և տալիս իր բացատրութիւնը.

—Սրբազան, դպրոցների փակելուց յետոյ, Բագուից եկաւ քննիչ Եղիշէ քահանան և այդ փողերը տարաւ իր հետ, ծախսեց և այլն։

—Լաւ, որդի, ասում է առաջնորդը, դէ ինչ որ ասում ես, էդ բոլորը գրիր, տուր ինձ։

—Սրբազան, մատս ցաւում է, չեմ կարող։

—Լաւ, դու թելադրիր, ուէրուէրը (թէ Զաւէն վարդապետը, որ ներկայ էր) կը գրի, իսկ դու կը ստորագրես։

—Չէ, սրբազան, չեմ կարող, մատս ցաւում է...

Եւ ինչպէս ստորագրէր, մատը ցաւում էր, մատի թռթախտ ունէր, հակառակ առաջնորդի գրիչ բռնելու ձեր ցոյց տալուն։

Ներկայ եղողների արտունջը շատանում է, մանաւանդ որ վկաները ամբողջ Դերբենդում գերակշիռ դիրք ունին հասարակութեան մէջ։ Առաջնորդը հանգստացնելու համար խոստանում է գնալուն պէս, Բագուից մի քննիչ ուղարկել, գործը պարզելու համար։ Յօտակցութեան յաջորդ օրը, Կոստանդին Վասիլևիչը ունկդրութեան է արժանանում առաջնորդի կողմից և մի գրութիւն ներկայացնում, (չնայած երեկ մատը ստորագրել չկարողանալու չափ ցաւում էր). այդ գրութեան բովանդակութիւնը մեզ բոլորիս համար հանելուկ, հետևանքը եղաւ միայն այն, որ առաջնորդի գնալուց անցել է մէկ և կէս տարի և դեռ քննիչը Դէրբէնդ չի հասել։

Այժմ, տէր Կալատուզեան, քեզ եմ թողնում որոշել, թէ այդ 2000 րուբլին, քանի կտոր եղաւ և ում մտաւ, առաջնորդի լայնագոյն, Տէր-Աբրահամի լծին, թէ Կոստանդին Վասիլևիչի լայնից մի բան պակաս գրպանը. էդ փողի ծայրը լաբիւրինթոսից դուրս քաշել, նշանակում է Դէրբէնդում հայոց նոր դպրոց հիմնել։

Մ'էշէդի

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

—Տիկ. Սանդուխտ, ես եկել եմ մի բան խնդրելու։

—Ի՞նչ բան, խէր է։

—Ընդունես խէր է, չընդունես շառ է որ շառ. ես եկել եմ քո աղջկայ ձեռքը կըպցնեմ իմ տղի ձեռքին. ոչ պակ դալու նըպատակով։

—Էհէ՜, ես իմ աղջիկը մարդու չեմ տալու։

—Ինչու։

—Որովհետև աղջիկս օբրօզովաննի է։

—Ուրեմն որ օբրօզովաննի է, պահում ես թթու բռնես։

—Չէ. ես պէտք է աղջկաս տանեմ Ռուսաստան տամ գօրօդօվօյի։

—Տիկ. Սանդուխտ, ի՞նչ բան է գըրօդօվօյ։

—Նա էլ մեր սարդարի նման օբրօզովանի մարդ է։

Միա Լեոն

## ԱՂՔԱՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

### ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿ. ՍՏԱՑԱԾ ՆՒԷՐՆԵՐԸ

Ալէքսէյ Վար. Տէր-Մկրտչեանից.

Մի կարաս լիքը ոչխարի մսի ղաւուրմա։ 1905 թւին, պարոն Տէր-Մկրտչեանը երկու ոչխար է մատաղ արել, օրը շաբաթ էր և Նաւակատիք։ Այդ պատճառով մատաղը ղաւուրմա էր արել և պահել, մինչև որ մենք ստացանք 1909 թւի Զատկի շաբաթ օրը։

Արտեմ Ղարիբովից.

Վեց թոփ չիթ և 8 թոփ միտկալ, աղքատ երեխաների համար շոր և սպիտակեղէն կարելու։

Արշակ Նազարիչ Միլովից.

18 թոփ մահուդ, 400 ադէալ, 13 դիւժին կանանց գլխի փաթաթան և 36 կոպ. փող։

Արտեմ Դանդուրովից.

20 դիւժին կերակուրի աման, 10 դիւժին դանակ չանգալ, 22 դիւժին պղաման, 1800 ամեն չափի լամպի շուշա, 120 վերստ երկարութեամբ լամպի ֆիտիլ և գարչիցի մի պրիբոր։

Արշակ Մամուլովից.

14 բոչկա գինի, 36 բոչկա քացախ և կէս չարէք արաղ։

Քամոեից.

40 «գութղի», 4 փութ խիղիլալա, 5 փութ ժիտկա, 16 յօքօ, 19 փութ օրագալ և 2 ոփլեօզկա։

Միխակ Շարբարչովից.

30 կարօրկա ձւի ներկ 18 հատ հում ձու և 96 կոպէկ նաղդ փող։

Միշա Կուլիջանովից.

2000 երեխաների փափախ և 90 կոպէկ փող։

Ղասար Դարչօից.

400 զառը, 300 զոճի, 6 հարթ, 2 տաւար, 4 զամէշ, մէկ էշ և մի զառան ջիզար։

Մ'էլիք Բախտամեանից.

10 փութ կարագ, 13 փութ վիչինայ, 22 փութ կալբաս, 300 քիլա մածուն, 800,000 ձու և 4 ֆունտ իւղ։

Բայնանդուրովի խանութից.

30 մէշոկ բրինձ, 4 բոչկա իւղ, 6 բոչկա շաքար 3 եաշիկ չայ, 40 դիւժին վաքս, 20 դիւժին ձեռքի սապոն, 700 կարօրկա սարդինկա, մի մէշօկ քիշմիշ, 1 ր-60 կոպէկ էլ նաղդ փող։

Կարապետ Վարդանովից.

30 թոփ ամերիկա, 20 դիւժին թաշկինակ։ Բացի դրանից պարոն Կարապետը կամեցել է իրեն համար մի նոր շլապկա գնել և որովհետև 2 րուբլի 50 կոպէկով չեն տւել, ստափ բարկացել և լաւ է համարել հին շլապկով եօլա գնալ, թէպէտ 6 տարի է գլխին է և արդէն գլխի իւղը դուրս է տւել ու այդ 2 ր. 50 կոպէկն էլ աղքատներին նւիրել։

Երեմիա Գուլազովից.

1800 մանէթի մահուղեղէն։

Բագրատ Ալ. Ծատուրովից.

1900 մանէթի սև փող և կէս զութխի։

—

Բարեգործական Ընկ. շինութիւնը չէ բաւականանում ստացւած նւէրների համար, անդամները շւարւած են մնացել, դահլիճը լիքն է զամբիլով ու խողի ճուտերով, որոնց աղմուկից գանգատները գնացել է։ Աղքատներից ամեն մէկին այնքան բաժին ընկաւ, որ բոլորն էլ հարստացան և այժմ իրենք էլ են նւէրներ ուղարկում։ Օրից օր նոր նոր նւէրներ են ստացւում։ Եթէ այդպէս շարունակւի Բար. Ընկերութեանը հարկաւոր կը լինի 15 ամբար և 5 միլիօն աղքատ ընտանիք։

Օսխար

ეროვნული ბიბლიოთეკა

# ԳՕԳՕԼ

## „Քիթ"

(Ծննդեան հարիւրամեակի առթիւ)

III

«Ողորմած տէր», ասաց Կուալեօվը դգուգւած, «չգիտեմ ինչպէս հասկանամ ձեր խօսքերը»... Այստեղ ամբողջ գործը, կարծեմ բոլորովին պարզ է... կամ դուք չէք կամենում... տեսէք դուք իմ սեփական քիթն էք։

—«Սխալւում էք, ողորմած տէր, ես ինձ համար մարդ եմ։ Բացի սրանից, մեր մէջ չի կարող լինել ոչ մի մտերմական յարաբերութիւն։ Դատելով ձեր պաշտօնազգեստի կոճակներից, դուք ծառայում էք կամ սենատում, կամ առնուազն դատավարական մասում, իսկ ես ուսումնական բաժանմունքում եմ»։

Սրանք ասելով, քիթը յետ դառաւ ու շարունակեց աղօթելը։

Կուալեօվը բոլորովին շփոթւեց ու ամաչեց, «ինչ անեմ», մտածում էր նա։

Այս ժամանակ կողքից լսեց կանացի շորերի զուարճական խշշոց։ Մօտւ մի բաւականին հասա, հասակաւոր կին, ամբողջ զարդարւած երիզաշուրջով, նրան զոհական չինութեան և նրա հետ նաշակով հագնւած մի բարակիկ օրիորդ, ամառային թեթև գլխարկով, իսկ և իսկ շաքարէ հաց։ Նրանց յետևը կանգնեց մի բարձրահասակ պարոն, մեծ բակենբարդներով և ամբողջ շարք օծիքներով ու բացից քթախոտատուփը։

Կուալեօվը մօտեցաւ. դուրս քաշեց ու ուղղեց վերնաշապկի բեհեզեայ օծիքը, շտկեց ժամացոյցի կնիքները, ժպտալով նայեց շուրջը, ուշադրութիւնը կեդրոնացրեց բարակ օրիորդի վրայ, որ թեթևութեամբ ծնրադրում էր և թափանցիկ սպիտակ մատները տանում էր ճակատին։

Կուալեօվի երեսին ժպիտն աւելի լայնացաւ, երբ նկատեց օրիորդի գլխարկի տակից երևացող կզակը և թշի մի մասը։ Բայց յանկարծ դաղւածի պէս, նա յետ թռաւ։ Յիշեց որ իր քթի տեղը ոչինչ չըկայ և արտասուքը դուրս ցայտեց աչքերից։ Նա յետ նայեց, ·այն պարոնին, որ կեղծում էր իբր թէ ինքն ստատսկի սովետնիկ է, ասելու թէ բաց է ի բաց խաբեբայ է, կեղծարար է, ոչինչ է, միայն իրան սեփական քիթն է... բայց քիթը չկար. նա յաջողել էր աննկատ դուրս գալ և ում գիտէ ում այցի գնալ։

Եկեղեցուց դուրս եկաւ, երբ պայծառ էր և արև. Նևսկու վրայ առհասարակ ժողովուրդ կար, կանանց ամբողջ ծաղկէ ջրվէժ, բռնած Պոլիցէյսկուց մինչև Անիչկինի կամուրջը, թափւել էր մայթերի վրայ։ Ահա և իրան ծանօթ նադւորնի սովետնիկն է գալիս, որին ինքը կոչում էր փոդպոլկով, մանաւանդ կողմնակիների մօտ։ Ահա և Եարիժկինը, սենատի սեղանապետը, նրա լաւ բարեկամը, որ միշտ բօստոնի մէջ տանուլ էր տալիս։ Ահա և միւս մայորը, Կովկասում ասեսորութիւն ստացած, ձեռքով կանչում է մօտ գնալ։

«Է՜հ, սատանան տանի», ասաց Կուալեօվը։ «Է՜յ, կառապան, ուղղակի տար ոստիկանապետի մօտ»։ Նա նստեց կառք ու քշել ասեց։

«Տա՞ն է ոստիկանապետը», հարցրեց նա մտնելով բակը։

«Ոչ, այս րոպէյին գնաց», պատասխանեց դռնապանը։

«Ա՜յ քեզ բան»։

«Այո», աւելացրեց դռնապանը, «և վաղուց չէ որ գնաց, մի րոպէ շուտ գայիք, գուցէ տանը գտնէիք»։

Կուալեօվը թաշկինակն երեսից չհեռացնելով, կառքը նստեց և յուսահատ աղաղակեց «գնա»։

«Ո՞ւր», հարցրեց կառապանը։

«Գնա ուղիղ»։

«Ի՞նչպէս թէ ուղիղ, առաջներս պատ է. աջ գնամ, թէ ձախ»։

Այս հարցը կանգնեցրեց Կուալեօվին և ստիպեց մտածել։ Ո՞ւմ դիմէ, բարեկարգի՞ն։ Ուղիղ է բարեկարգի վճիռները անմիջապէս կատարւում են, բայց նա ամենևին առընչութիւն չունի ոստիկանութեան, կամ այս տեսակ գործերի հետ։ Ցայտարարութիւնների բիւրօ՞ն, որպէսզի ամենն էլ կարդանան փախած քիթը ձեռբակալել ու բերել իրան։ Բայց յայտարարութիւնների

---

# ՖԵԼԻԵՏՕՆ

## ԼՕՏՕ*)

(Պատկեր իրական կեանքից)

Երկրորդ գիլդի կուպեց Կարապետն ու նրա կինը Բարալէն, գիշեր ցերեկ զալմաղալ ունէին։ Մարդը առաւօտից մինչև երեկոյ իր խանութում աշխատանքի ետևից էր, իսկ կինը ամեն գիշեր գնում էր ժողովարան լօտօ խաղալու։

Այդ անիծած լօտօն այնքան խանել էր Բարալէի գլուխը, որ երեխաներին, տան տեղ անխնամ թողած՝ ամեն գիշեր մինչև ժամը մէկը, երկուսը թւում էր ժողովարանում, քիչ անգամ տանում էր, շատ անգամ տարւում ու վերջը փնթփնթալով վերադառնում էր տուն։

Ամուսինը քնաթաթախ բաց էր անում դուռը թէ չէ՝ սկսում էր անբաւականութիւն և վերջանում էր նրանով, որ Կարապետը աղաչում էր լսել ու պարկել քնելու։

Մի անգամ մեծ կռիւ ունեցան։

—Դու ինձ քանդեցիր, ասաց Կարապետը, որ հաշւենք քո լօտօն ամեն գիշեր ինձ նստում է երեք չորս մանէթ։ Այդ էլի ոչինչ, տունը տակն ու վրայ եղաւ։

—Խօսքս խօսք է, պատասխանեց կինը, տացի այնքան պէտք է խաղամ, մինչև բաղդս կը բացւի։ Հաւատացած եմ, որ մի օր բոլոր տանուլ աւածս էլ ու մի բան էլ աւել յետ կը ստանամ։

—Ոչինչ չես տանելու, ա կին, Աստւած, երկինք, հաւատա ինձ...

—Չէ, չէ, չէ, հակւացմը։

—Ջանդ դուրս գայ, ինչ ուզում ես արա, ես քեզ էլ փող ասողը չեմ։

—Աչքդ դիր փողերդ, չեմ ուզում, վրդովւած խօսեց Բարալէն, արտասուեց ու մտաւ իր սենեակը։

—

Կարապետը ուրիշների նման խանդոտ չէր, հաւատացած էր իր կնոջ անարատութեան նկատմամբ։ Նա կսկում էր միմիայն լօտօյի պատճառով, միւս բաները երկրորդական էին։

Կինը առաջւայ նման շարունակում էր խաղալ, հնայելով այն հանգամանքին, որ այլևս կոպէկ անգամ չէր ստանում ամուսնուց։ Ինչ որ կարողանում էր տանու իրերից, ծածուկ ծախում, գրաւ էր դնում, հարևաններից պարտք էր վերցնում։ Ցոյս ունէր որ վերջ ի վերջոյ լօտօն պէտք է բախտաւորացնէ իրան։

Մի երեկոյ քանսուհինգ մանէթ պարտք գրած՝ հաւատով ու լի յոյսով գնաց ժողովարան, հարևան կանանց հետ միասին։ Բայց այդ փողը վերջինն էր, այնպէս որ այդ գիշերը պէտք է որոշւէր նրա վիճակը։ Ծախելու և գրաւ դնելու յարմար բան այլևս չէր մնացել տանը։

Ծադայ... բայց, ո՜ անիրաւ ճակատագիր, բոլորը տանուլ աւեց։ Մեռած սրտով ու խորտակւած յոյսերով վեր կացաւ տեղից, դահլիճի այս ու այն կողմը անցաւ։ Յանկարծ նայելով հայելու մէջ, զարհուրեց իր կերպարանքից։

Իր համար անսպասելի կերպով մօտեցաւ блестящій кавалеръ անունով յայտնի երիտասարդին, որը վաղուց հետամուտ էր լինում իրեն և խնդրեց ուղեկցել մինչև տուն։

Այս անգամ թէպէտ սովորութիւնից ուշ վերադարձաւ իր բնակարանը, բայց ամուսնու առաջ պարզերես դուրս եկաւ։ Եւ այնպէս Բարալէն ապացուցեց Կարապետին, որ ինքը թէ խելօք է և թէ փողի հաշիւ հասկացող։

—Տեսնո՞ւմ ես այս փողերը, հպարտութեամբ դիմեց ամուսնուն, չէ որ ասում էի որ վերջ ի վերջոյ պէտք է տանեմ։

—Ներիր, Բարալէ ջան, խօսեց Կարապետը, ես ինչ գիտէի, թէ այդպիսի շնորհք ունես... միայն, թէ ինձ սիրում ես զգոյշ խաղա.

Գ. Բաշ

---

*) Ի պատիւ լօտօյի արգելման ութամսեակին, որի թոյլտւութեան համար խնդիր են մատուցանում նահանգապետին, Թիֆլիսի ժողովարանը, Արտ. ընկերութիւնը և Թիֆլիզահայ կանայք։



ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

## „ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

Ամենալաւը Աշխարհում



Ամենաառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յատկութեան, շքեղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից։

ԱՆԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



ԿՐԿ ԽԱԿՕՇԻԿՆԵՐ

## ՊՐՕՎՕԴՆԻԿ

ԱՐՏՕՆԻԱԾ

Ն ԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

## ՄԻԻՆԻ ԵՒ ՎԻՅՍ

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՒՈՒՄ

1888

---

### Мебельный магазинъ

## БР. ГАЛУМОВЫХЪ,

*Мадатовская ул., противъ Александровскаго сада*

Имѣется постаянно большой выборъ:
УМЫВАЛЬНИКОВЪ: англійскихъ и московскихъ.
КРАВАТЕЙ: англійскихъ, подносныхъ и мѣстной работы.
ЗЕРКАЛА: простѣночныхъ, для переднихъ и фантази
МЯГКОЙ МЕБЕЛИ: „Рококо", модернъ и др. стилей, орѣховой мягкой и вѣнской.
СТУЛЬЕВЪ вѣнскихъ всемірно извѣстныхъ фабрикъ „ТОННЕТЪ" и „ВОЙЦЕХОВА", а также дубовыхъ, специально для столовыхъ.
ГРОМАДНѢЙШІЙ выборъ буфетовъ, обѣденныхъ, письменныхъ, ломберныхъ и др. столовъ, комодовъ, шифоньерокъ, библіотекъ, гардеробовъ, вѣшалокъ и пр.

**Полная стильная обстановка комнатъ.**

---

ՆԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ շարունակւում են կեղծել մեր էտիկէտները, որպէսզի՝ պաշտպանեն իրենց անկի վատ ապրանքը, գործադրելով արկղիկների և կապոցների միատեսակ ներկն ու մարկան, փոխանակ բոլորին յայտնի

ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՍԻՄՊԱՏԻԱ 10 ՀԱՏԸ
№ 8 10 ՀԱՏԸ
**5 Կ.**



Ինչպէս նաև մեր ֆիրմայի ուրիշ գլանակներ։ Մեր պ. պ. գնողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԿԱՅԻՆ և ազգանունին

## Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ

# ԵՂԲ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐԻ ԵՒ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

Նիկոլայեւսկի կա- **ԱՌԵՒՏՐԱԿ. ՏԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ** մուրջ տան Քամոյեւի

# ԼԻԿՎԻԴԱՑԻԱ

## Օ Գ Տ Ւ Ե Ց Է Ք   Դ Է Պ Ք Ի Ց

Հազար իննհարիւր ու ինն թւից,
Գարնան Մարտ ամսի տասներկու օրից.
Մենք մտածել ենք ԼԻԿԻԻԴԱՑ անել
Եւ մեր խանութի ապրանքը ծախել
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Ուստի այս օրից, ով թիֆլիզեցիք,
Եթէ խելք ունէք և ճաշակով էք,
Համ էլ ուզում էք սիրուն բան հագնել,
Մեր Առեւտրական Տունը համեցէք։
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Մենք ունենք այստեղ կանանց զգեստներ,
Այր մարդկանց համար սիրուն հագուստներ,
Երեխաների շորեր ճաշակով.
Անհամեմատ, բազում էժան գներով։
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Մենք վաճառում ենք առանց մի շահի,
Միայն ձեր օգտին դիմում ենք փասի.—
Ինչու որ, գործը ուզում ենք փակի,
Եթէ խելք ունէք, օգտուեցէք դէպքից։
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ

ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ

Եւ որ հաւատաք, թէ ճիշտ ենք ասում,
Խնդրում ենք անձամբ գաք ու համոզւէք.
Տեսէք գները ու մտածեցէք
Էլ սրանից էժան կարող է ծախւել։
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Եթէ կը գնէք—մենք կը վաճառենք
Եւ մեր խանութի բոլոր սարք ու կարգ.
Շկաֆ հայելի, կասսա ու դարակ.
Առեւտրատունը հիմքից բարեկարգ։
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Օգտուեցէք դէպքից և ճանապարհէք,
Նիկոլաեւսկի կամուրջով անցէք,
Յակոբջանների և Սարգսեանցի
Առեւտրատունը դուք մի մոռացէք։
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.

Օգտուեցէք դէպքից, օգտուէցէք դէպքից,
Եթէ խելք, ճաշակ, փողի զաղր ունէք.
Դուք անմիջապէս մեզ մօտ համեցէք
Եւ Զատկի համար էժան զուգուեցէք՝
ՕԳՏՒԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ.





## ԱԼՄԵԶԱ

ՁՂ ԼՍԻԱՆ ՄԻՋՈՑ ԱԶԱՄՆԱՑԱՆԻ ԴԷՄ.

Ալ. երկու բարելում հանդստացնում է ատամնացաւը։
Ալ. բուժում է լնդերքի հիւանդութիւնները և կանգնեցնում է արիւնը։
Ալ. պնդացնում է լնդերքն ու ատամները։
Ալ. բուժելուց յետոյ ատամները չեն ցաւում։
Ալ. ամ. միշտ ոչնչացնում է բերնի հոտը։
Ալ. անհրաժեշտ միջոց է ամեն մի ընտանիքում։
Ալ. ահրաժ. միջոց է ճանապարհորդ. ժամանակ։
Ալ. բազմաթիւ շնորհակալական նամակներ։
Ալ. բազմաթիւ ընծաներ ցուցահանդէսներում։
Ալ. գրասենեակում այս միջոցով բժշկում ենք ձրի, որպէսզի բոլորին համոզ. նրա բուժիչ յատկութեան։
Ալ. բացառապէս վաճառւում Անարաձէի պահեստում, Թիֆլիս։
Ալ. խնդրում ենք չշփոթել ատամի ուրիշ դեղ. հետ։
Ալ. կարելի է ստանալ գլխաւոր պահեստից։

Тифлисъ, Пушкинская ул. № 15.

Փարձն. որ. գինն է 40 կ., Նորմալ սրուակը 1 ր. 20. Ներկայացուցիչ ամբողջ. Կովկասի և Անդրկասպեան երկրի՝ Ի. Գ. Անարաձէ։

Թույլատր. մայրաք. բժ. վարչ. վկ. № 347.



**№ 4711** КРАСКА для ВОЛОСЪ
изъ ОРѢХОВАГО ЭКСТРАКТА

**ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿ**

Ընկուզի քաղուածքից. Կարճ ժամանակում տալիս է մազերին ուզած գոյնը՝ ամենաբաց շիկագոյնից մինչև սեւ, թէկուզ մազերը սլեխաան կամ խարտեաշ լինեն, այնպէս որ կարելի է նորոգել նրանց բնական գոյնը։ Ինչքան յաճախ գործածուի այս ներկը, այնքան կը մուգանան մազերը։ № 4711 մազերի համար ներկը, ընկուզի հիւթից՝ արժէ որ գերադասուի մազերին գոյն առող բոլոր միջոցներից, որովհետև նա չէ պարունակում իր մէջ ոչ մի վնասակար նիւթ։

ԳՈՅՆԵՐՆ ԵՆ

սեւ, դարչինագոյն, շագանակագոյն և բաց

Գինը փոքր սրուակի 1 ր. 20 կ.
» մեծ » 2 ր. — կ.

Ծախւում է բոլոր լաւագոյն խանութներում։

ՖԵՐԴ. ՄՒՒԼՀԷՆՍ

Քէօլն Ռայնի վրայ, բաժանմ. Ռիգայում։
Նորին Կայսերական մեծութեան Դատան մատակարար։

**Ферд. Мюльгенсъ**
Кельнъ н|Рейнѣ. отд. въ Ригѣ.



ԼՈՅՍ ՏԵՍԱՆ ԳԵՂԱԳԷՏ-ՆԿԱՐԻՉ

# Օ. Ի. ՇՄԵՐԼԻՆԳԻ

## „ԿՈՎԿԱՍԵԱՆ ՏԻՊԵՐ"

### Պ Օ Ս Տ-Կ Ա Ր Տ

**27** տեսակ

Պահեստը Բիխօվի

վիմագրատան

Գոլովինսկի պրօսպ. Թիֆլիզ։

# ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ
# ԳՐԱՄՄՕՖՕՆ
# ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՀՐԱՊԱՐԱԿ № 9.

Ո՞վ է պահպանում հաւաքոյթներում կենդանութիւն և ուրախ զրոյց։

Անկասկած այն գրամմօֆօնները, որոնք իսկական զօնօֆօնի և գրամմօֆօնի հարուստ թերթիկներ (պլաստինկա) ունին, վերան արտատպած գործարանային այս պատկերը։



Գրամմօֆօն սիրողների և բարեկամների ուշադրութիւնն ենք հրաւիրում, որ շատ կան խաբող մեքենաններ, իսկ «ԳՐԱՄՄՕՖՕՆԸ» միակ արտադրութիւնն է ԳՐԱՄՄՕՖՕՆ յայտնի համաշխարհային ընկերութեան Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Խարկով, Ռոստով Դ. վ, Օմսկ, Թիֆլիզ և Ռուսական կայսրութեան բոլոր քաղաքների երաժշտական խանութների։

Չգիտենալով ձայնանիշներ, ամեն մէկը կարող է զուարճանալ իր տանը, գեղարուեստական-երաժշտական կտորներ կատարելով, օգնութեամբ գրամմօֆօնի։



**ԽՕՍԿԱԿԱՆ ԳՐԱՄՄՕՖՕՆ ԻՐ ԹԵՐԹԻԿՆԵՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԸ ՉԵՆ ԶՂՋՈՒՄ**

Գրամմօֆօնը դառնում է բարեկամ առնողին, իսկ առնողը սիրահար և բարեկամ այս անբասիր երաժշտական գործիքին։

Յանձնարարում ենք մէկ երեսով և կրկներես թերթիկներ, զանազան եղանակներով, հայկական, վրացական, ռուսական, պարսկա-թաթարական և այլ լեզուներով։ Բազմաթիւ նորութիւններ կան։

Պահանջեցէք փետրուարի և մարտի վերջին նորութիւնների և հրատարակութիւնների ցուցակը։ Կատալօգներ, պրէյսկուրանտներ և այլն բաժանւում են և ուղարկւում ըստ պահանջման

**ՁՐԻ**

ՅԱՌԱՋԻԿԱՅ ՏՕՆԵՐԻՆ, գնեցէք և ընծայեցէք իրար, ինչպէս ամենալաւ և յարմար նուէր,

**ԳՐԱՄՄՕՖՕՆ**-Ը ԻՐ ԻՍԿԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՓՈՔՐԻԿ ՀԱՒԱՔԱԾՈՅԻ ՀԵՏԸ.

ZONOPHONE TRADE-MARK

**Ապարատներ կան 30 րուբլուց մինչև 100 րուբլի և աւելի թանգ**

**Թերթիկները 35 կոպէկից մինչև 3 րուբլի և աւելի թանգ**

Հետաքրքրուողներին ամեն մի թերթիկ ցոյց է հանւում ՁՐԻ, ընկերութեան բոլոր խանութներում։

ԳՆԵԼԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ

Ցանկացէք ԳՐԱՄՄՕՖՕՆ իր իսկական թերթիկներով և դուք ինքներդ կաշխատէք ձեռք բերել այն։

Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.

## ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՍԷՐ ԵՒ ՏԱՆՋԱՆՔ





ԲԱԼԿԱՆԵԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Համեվրոպական խաղաղութիւնը վտանգւում էր Աւստրիայի ագահութեամբ և Սերբիայի չարժով։

Այս անգամ էլ Եւրոպական դիպլոմատիան յաջողեցաւ կրակին առաջն առնել և Բուլղարիայի ազգաբնակութեանը կրակի մէջ թողնել։



վիմագր. Գ. Դիւսամբրգեկի

«ՀՕՎԻՒ» շաբաթաթերթի խմբագրութիւնը
և
հաւատացեալ ոչխարները։